

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում սննդի կազմակերպման ծառայություն իրականացնող կազմակերպության ընտրության երկու փուլով բաց մրցույթի նախաորակավորման գործընթաց իրականացնելու մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը իրականացնում է երկու փուլով բաց մրցույթի նախաորակավորման գործընթաց՝ ՀՀ կենտրոնական բանկում սննդի կազմակերպման ծառայություն իրականացնող կազմակերպության ընտրության նպատակով:

Նախաորակավորման գործընթացին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին և ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական և ֆինանսական միջոցներ:

Նախաորակավորման գործընթացին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետևյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

- 1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
- 2) մասնագիտական փորձառություն.
- 3) տեխնիկական միջոցներ.
- 4) ֆինանսական միջոցներ.
- 5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձևով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչև **2019թ. հոկտեմբերի 28-ի** ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, **2019թ. հոկտեմբերի 28-ի** ժամը 16:00:

Նախաորակավորման գործընթացի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է **2019թ. նոյեմբերի 01-ին** ժամը 16-00:

Նախաորակավորման գործընթացին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Նախաորակավորման գործընթացին մասնակցելու հրավերը, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ներքին ծառայությունների վարչություն, հեռ. 59-28-02, 59-28-05 ներքին՝ 18-02, 18-05:

Հասարակայնության հետ կապերի ծառայություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում սննդի կազմակերպման ծառայություն իրականացնող կազմակերպության ընտրության երկու փուլով բաց մրցույթի նախաորակավորման գործընթաց իրականացնելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է ՀՀ կենտրոնական բանկի մրցույթների անցկացման հանձնաժողովի կողմից:

1. Պատվիրատուն՝ ՀՀ կենտրոնական բանկը, գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6 հասցեում, իրականացնում է երկու փուլով բաց մրցույթի նախաորակավորման գործընթաց՝ ՀՀ կենտրոնական բանկում սննդի կազմակերպման ծառայություն իրականացնող կազմակերպության ընտրության համար:

2. Երկու փուլով բաց մրցույթի նախաորակավորման գործընթացին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ սահմանված որակավորման չափանիշներին և ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական և ֆինանսական միջոցներ:

3. Նախաորակավորման գործընթացի ժամանակ մասնակիցներին կարող է հայտնի դառնալ կամ վստահվել պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկություն, որի հրապարակումը (ցանկացած ձևով) այլ անձի (այդ թվում՝ հարազատներին) կարող է առաջացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

4. Նախաորակավորման գործընթացին մասնակցելու իրավունք չունեն անձիք՝

- որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության եւ օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

- որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

5. Նախաորակավորման գործընթացին մասնակցելու համար Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1/ մասնագիտական գործունեության համապատասխանություն, փորձառություն (պարտադիր է),

2/ տեխնիկական միջոցներ

3/ ֆինանսական միջոցներ

4/ աշխատանքային ռեսուրսներ

5/ մատակարարման փորձ

6. Սույն նախաորակավորման գործընթացին մասնակցելու նպատակով մասնակիցը պետք է ներկայացնի՝

- դիմում, ըստ **Հավելված N 1-ի:**

Մասնակցի՝ նշված դիմումին կից ներկայացվում են՝

- մասնակցի պետական գրանցման վկայականի, ներառյալ բոլոր ներդիրների պատճենները՝ համապատասխան ստորագրությամբ և “իսկականի հետ ճիշտ է” նշագրմամբ (միայն ռեզիդենտների համար),

- Հայտարարություն՝ մասնակցության իրավունքը և որակավորումը հավաստելու վերաբերյալ՝ ըստ առաջարկվող ձևի և դրա նկատմամբ առաջադրվող պահանջների (**Հավելված N 2**),

- Տեղեկանք՝ մասնագիտական փորձի վերաբերյալ (առնվազն 3 տարի), ինչպես նաև՝ անընդհատ առնվազն 200 հաճախորդի ճաշարանային սպասարկման (հանրային սննդի կազմակերպման և իրացման) փորձ (**Հավելված N 3**),

- Տեղեկանք՝ աշխատակիցների աշխատանքային փորձի, թվաքանակի և որակավորման վերաբերյալ (**ազապ ոճ**),

- Կազմակերպության համապատասխանություն առողջապահական նորմերին և ստանդարտներին, լիցենզիաների և թույլտվությունների առկայություն (**ազապ ոճ**),

- Հայտարարություն՝ գնման ընթացակարգի կիրառման ընթացքում ստացված տեղեկությունների չբացահայտման պարտավորվածության և դրա վերաբերյալ պատասխանատվություն կրելու մասին (**Հավելված N 4**),

7. Գնման գործընթացին հետագա մասնակցության իրավունք են ստանում նախաորակավորված մասնակիցները:

8. Մասնակիցը համարվում է որակավորված, եթե բավարարում է սույն հայտարարության վերը նշված պայմաններին և իր կողմից մատուցվող ծառայությունը համապատասխանում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված չափանիշներին:

9. Մասնակիցը (տնօրենը) կամ նրա կողմից լիազորված անձը (գործակալը), կարող է ներկայացնել սույն հայտարարությամբ նախատեսված փաստաթղթերը՝ ոչ ուշ, քան **2019 թ. հոկտեմբերի 28-ի** ժամը 16:00-ը՝ ՀՀ կենտրոնական բանկ, ք. Երևան, Վ. Սարգսյան 6 հասցեով կամ էլեկտրոնային փոստով՝ galust.galstyan@cba.am հասցեով:

10. Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, **2019 թ. հոկտեմբերի 28-ի** ժամը 16:00:

11. Փաստաթղթերը ներկայացվում են սուսնձված, Մասնակցի կողմից ստորագրված և կնքված/եթե կիրառելի է/ ծրարով: Եթե նախաորակավորման հայտը ներկայացնում է լիազորված անձը (գործակալը), ապա նախաորակավորման հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

12. Ծրարի վրա հայերեն լեզվով նշվում են.

ա. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, ք. Երևան, Վ. Սարգսյան 6,

բ. «սննդի կազմակերպում»,

գ. «Չբացել մինչև նախաորակավորման հայտերի բացման օրը» բառերը,

դ. Մասնակցի անվանումը /անունը/, գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

Նախավորակավորման հայտը կարող է ներկայացվել թղթային, հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 6, կամ էլեկտրոնային եղանակով՝ մրցույթների անցկացման հանձնաժողովի քարտուղարին հասցեագրված էլեկտրոնային հասցեին galust.galstyan@cba.am:

13. Հայտերի քննարկումը և հնարավոր նախաորակավորված անձանց ցուցակի հաստատումը տեղի կունենա **2019 թ. նոյեմբերի 01-ի** ժամը 16:00-ին՝ ՀՀ կենտրոնական բանկի մրցույթների անցկացման հանձնաժողովի նիստում:

14. Ներկայացված պայմաններին չհամապատասխանող, այդ թվում սահմանված ժամկետից ուշ փաստաթղթեր ներկայացրած մասնակիցները չեն կարող նախաորակավորվել:

Եթե նախաորակավորման մասնակիցների թիվը անցնի տասից, ապա գնման գործընթացին հետագա մասնակցության իրավունք են ստանում նախաորակավորված մասնակիցների ցուցակում առաջինից տասներորդ տեղերն զբաղեցրած մասնակիցները: Առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցնում են նախաորակավորման հայտարարության պահանջներին համապատասխանող գնահատված այն մասնակիցները, որոնց կողմից Հավելված N 3-ով գնահատման համար ներկայացված՝ նախկինում կատարված պայանագրերի գումարներն ամենաբարձրն են:

15. Ներկայացված փաստաթղթերն ստանում, դրանք առանձին գրանցամատյանում գրանցում է ՀՀ կենտրոնական բանկի մրցույթների հանձնաժողովի քարտուղար Գալուստ Գալստյանը (հեռախոս(+37410) 59-28-05, 59-28-02, ներքին՝ 18-05, 18-02):

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ

(Մասնակցի անվանումը)

հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու ՀՀ կենտրոնական բանկի կողմից մրցակցային բանակցության սահմանափակ ընթացակարգի նախատրակավորման ընթացակարգին և հայտարարության պահանջներին համապատասխան ներկայացնում է պահանջված փաստաթղթերը:

Առդիր՝ _____ թերթ:

(Մասնակցի անվանումը (ղեկավարի) անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

-----2019թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախարարակազմի հայտարարությամբ սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների վերաբերյալ

(մասնակցի անվանումը)

հայտարարում է, որ.

1) դատական կարգով սնանկ չի ճանաչվել.

2) գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար.

3) ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

ա/ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,

բ/ մասնագիտական փորձառություն (պարտադիր),

գ/ տեխնիկական միջոցներ,

դ/ ֆինանսական միջոցներ,

ե/ աշխատանքային ռեսուրսներ:

Սույնով հայտնում ենք նաև, որ նախարարակազմի որոշմամբ, երկու փուլով բաց մրցույթի հրավերով և/կամ հաղթող ճանաչվելու դեպքում ՀՀ կենտրոնական բանկի պահանջով՝ մինչև պայմանագրի կնքումը, կարող ենք ներկայացնել մասնագիտական փորձառության, տեխնիկական միջոցների, ֆինանսական միջոցների և աշխատանքային ռեսուրսների չափանիշները հաստատող և անհրաժեշտ ծավալով և մեր առաջարկով նախատեսված աշխատանքներն իրականացնելու վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը (ապացույցները):

(մասնակցի անվանումը (ղեկավարի) անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

----- 2019թ.

(ամսաթիվը, ամիսը)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սննդի կազմակերպում՝ այդ թվում նաև ֆուրջետների կազմակերպում

“Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը” չափանիշի մասին

Սույնով _____ հավաստում է,

մասնակցի անվանումը (անունը)

որ 2019 թվականին նախորդող առնվազն երեք տարիների ընթացքում

մասնակցի անվանումը (անունը)

պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման աշխատանքների կատարման հետևյալ գործարքները՝ նախկինում կատարած պայմանագրերը:

Նախկինում կատարված պայմանագրերի			
առարկան	պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները	Պայմանագրով նախատեսված սպասարկման օրական ծավալ, մարդ/օր	Գործող պայմանագրի ժամկահատված
1	2	3	4
Տարեթիվը՝ թվական			
1.			
2.			
Տարեթիվը՝ թվական			
1.			
2.			
Տարեթիվը՝ թվական			
1.			
2.			

մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

2019թ.

(ամսաթիվը, ամիսը)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գնման ընթացակարգի կիրառման ընթացքում ստացված տեղեկությունների չբացահայտման պարտավորվածության և դրա վերաբերյալ պատասխանատվություն կրելու մասին

Սույնով հայտարարում ենք, որ կստանձնենք գնման ընթացակարգի կիրառման ընթացքում ստացած տեղեկությունների չբացահայտման պարտավորություն և դրա խախտման համար ՀՀ օրենսդրությամբ և կնքվելիք պայմանագրով նախատեսված պատասխանատվություն:

Մասնակցության իրավունքին և որակավորման չափանիշներին ներկայացվող պահանջները բավարարելու դեպքում, պատրաստ ենք ինչպես միակողմանի, այնպես էլ պատվիրատուի՝ ՀՀ կենտրոնական բանկի հետ երկկողմանի ստորագրել պետական, ծառայողական, առևտրային և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանությունն ապահովելու պարտավորագիր:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

2019թ.

(ամսաթիվը, ամիսը)